

Ա. Ս. Դ. ՀԱՅ. Ամեր. Շրջ. Գրծ. Յանձնի թիւ 17

ՓԱՐԱՄԱԶ

ՋԵՌԵՔԵՐԸ ՎԵՐ

ԿԱՄ

ՃՈՒՂՈՒՊՐԻՍՆԵՐԸ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՖ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

(ՊՐԵ-ԾԵԼԻ Է ԱԽՆԵՆՈՒՄ 1907 Թ., ԲԱԳԻՈՒՄ)

—o<-†->o—

ՏՊԱՐԱՆ

ԵՐԻՑԱՍԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

1917

Ն Ի Ք Ա Կ Օ

891.99

Նկ-30

-8 NOV 201

ՀՀՀՀ
42-30

Հրտ. Ս. Դ. Հնչ. Ամեր. Շրջ. Գրծ. Յանձ. ի թիւ 17

ՓԱՐԱՄԱԶ

ԶԵՌՔԵՐԸ ՎԵՐ

ԿԱՄ

ՃՈՒՂՈՒՊՐԻՍՏՆԵՐԸ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

(ԴէՊՔԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ 1907 Թ., ԲԱԳԻՈՒՄ)

—o«—†—»o—

ՏՊԱՐԱՆ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի

1917

Շ Ի Ք Ա Կ Օ

28.08.2012



ՓԱՐԱՄԱԶ



64541-62

ՓԱՐԱՄԱԶ

(Կենսագրական համառօտ ծանօթութիւն)

Գողթնեաց գաւառի Մեղրի գիւղից։ Իսկական անունն էր Մատթէս Սարգսեան։ Տաճկաստանում ապրում էր՝ Ռոտոսթոցի ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ անունով։

Գրել ՓԱՐԱՄԱԶԻ կենսագրականը՝ կը նշանակէ պատմել Հայ Յեղափոխութեան պատմութիւնը՝ ընդհանրապէս, Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան կուսակցութեանը՝ մասնաւորապէս։

Մեր վերծնուող կեանքի բոլոր ուրախ եւ տխուր փուլերի մէջ՝ նա որոշեալ, փառաւոր բաժին ունի։

Զկայ Հայ Պայքարի շրջանի մէջ մի էջ, ուր՝ ՓԱՐԱՄԱԶԻ շունչը, նրա եռանդը, խանդավառութիւնը, իրական գործակցութիւնը իր վճռական դերը ունեցած չլինի։

Բերլինի ռազմագրութեան 61րդ յօդուածը, ո՛չ միայն մնացել էր անիրազործելի, այլև Գերմանական գիւտանագիտութիւնը, ուռ 1882-ին Թիւրքիալին ապահովել էր, որ նա մեռած տառ էլ կը մնար։

Դուլցինիօվի խնդիրը այդ սալմանով էր կարգադրուած։

Ծերունի Գլադասոնը իր վերջին բողոքագիր-ձանուցագիրը տուած էր. ամէն ինչ մնացել էր առանց դրական արգիւնքի։

Սուլթան Համիտը իր հայտնինջ քաղաքականութիւնը սկզբնաւորել, սիստեմաթիք գործադրութեան մէջ էր դրել։

Հայր Հայրենիքի մէջ՝ Հայ ժողովուրդի չարչարանքը, նրա բազմադիմի ցաւերը ծնել էին անկախ

ողիներ, ազատասէր, բռնութեան լծին չհամակերտ պող երիտասարդներ :

Սրանք խմբակներ կազմելով՝ լեռները, Բարձունքներն էին ապաստանած և Հայ ընդդիմադրական, պայքարող, մարտական ողին կազմակերպած :

Հայ լեռները, ծորերը, գետերը, Հայ երկինքը նոր կեանքի շէմքին էին կանգնած :

Կ. Պօլսոց և ծովեղերեաչ ա'ց քաղաքների մէջ, Հայ երիտասարդութեան «գաւառացի» մասը սկսել էր մտմտուքի մէջ ընկնել. նա փնտում էր ուղին, շարժուելու կամէութիւն էր ցուց տալիս :

Այլ էր տեսարանը Կովկասի մէջ: Այնտեղ ամէն ինչ Հայկական էր. ամէն քաջակտիսի Հայի անհուն տառապանքը արձանացած, կարկառուն ճեւեր էր առած. զուլումի աշխարհից զունդագունդ փախչողները կենդանի վկաներ էին. նրանք պատմում, ձայնի ալիքներին էին տալիս իրենց ցաւը, իդը: Նրանք մտնանիշում էին ձեռքը, որ իրենց վրան էր բարձրացել եւ սպանել աշխատում :

Կար աշխաել կորովալից զարգացած երիտասարդութիւն. նա տոգորուած էր ժամանակակից զաղափարներով, գիտէր կեանքի արժէքը, հասկացել էր պարտականութեան չափը, սահմանը: Նա տողի, անձնուէր էր, ժողովրդական խաւերից բղիած: Նա քաղաքական, տնտեսական, համեմատական ապահովութիւն էր վայելում, միջոց ունէր աւելի լայն չափերով պարապելու Տաճկա-Հայ տառապանքով, ա'ց Դատով, որ իրենն էտ էր :

Կովկասը եթէ Մայր Հայքինիքից արհեստական սահմաններով էր բաժանուած, բայց բարուցպէս, մտաւորապէս չէր դադարում միութիւն, ամբողջութիւն կազմելուց: Նա ապահով վայրի մէջ՝ հարազատ

շարունակութիւնն է՛ չպթակի օղակների մէջ դաւարուող իր եղբացների, արիւնակիցների:

Ու Կովկասը, նրա խորհող, բանիմաց, գգալուն երիտասարդութիւնը մտաւ պատմական երկունքի մէջ:

Ամէն ինչ ինքնարերարար, ինքնարուղին էր, արդիւնք Հայ յառաջադէմ կեանքի:

Զկար քաղաք, մանաւանդ Տաճկաստանի սահմանների մօտ եղող, — Երեւան, Աղէքասանդրապօլ, Ղարս, Սարի-Ղամիչ, Հին-Նախիջնեւան, եւայն, — որ իր տեղական խմբացին կազմակերպութիւնը ունեցած չինէր:

Վայոց Չորի (Դալարագեալ) լեռնական գիւղացիներն անդամ խմբակցութիւններ էին կազմած: Բուլորի էլ նպատակն էր Տաճկա-Հայստանի աղաստագրութեան սուրբ, պատմական, նուիրական Գործը:

Ամէն ինչ խառն ի խուռն էր: Ոգեւորութիւնը, եռանդը՝ բուլորի շարժիչ ոլժը:

Դա ժողովրդների զարթօնքի տարերացին հոսանքը, առաջին շրջանն էր:

ՓԱՐԱՄԱԶԱՋԸ պատմական այլ ուղիսի արդիւնքըն էր:

Նրա գործօն, բնականից լմբուստ հողին այլեւս իրեն հանդիստ չի տալիս:

Հակառակ իր ծնողների թախանձանքին, իր ուսուցիչների պնդումներին՝ նա թողնում է Ս. Էջմիածնալ Գէորգեան Ճեմարանի չորրորդ դասարանը, և մտնում է նոր հոսանքի մէջ:

1883-ի գարնանը՝ նա երեւում է Հին-Նախիջնեւանի մէջ: Քաղաքի երիտասարդութիւնը՝ ծածուկ ժողովներ կազմելով, աղահութեամբ լսում էր նրա դասախոսութիւնները: Դասախոսը համակ բոց, կրակ

էր . նա բոլորի սիրաը իր հետ ունէր :

Այդ ժամանակ , գեռ հազիւ 20 տարեկան , թիֆ-լիզի ներսէսեան Դպրանոցը աւարտած՝ Հին-Նախի-ջեւանի Հայ երկու դպրոցների տեսչութիւնն էի վարում :

Երկու ընկերներիս առաջին ծանօթութիւնը այն-տեղ կատարուեց :

Մինչեւ ուսումնական տարուաչ աւարտիլը եւ մեր ըրջանի ստուարացումը՝ ընկեր Փարամազին ու-ղարկեցի Զահուկ , ուսուցչութեան պաշտօնով : Բայց հազիւ մէկ ամիս այնտեղ մնալով՝ վերադարձաւ , Պարսկաստան եւ այնտեղից Տաճկաստան անցնելու հաստատ որոշումով :

Մենք բաժանուեցանք , մի օր երկրի մէջ իրարու գանելու փոխադարձ խոստումով :

Գալիս է 1887-ը : Հնչակեան Կուսակցութեան Հիմնադրութեան թուականը :

Սարսպատականը , ՓԱՐԱՄԱԶԻ : Ճեռքով պատ-րաստուած , կազմակերպուած , առաջին անդամից , Յեղափոխական ընդհանուր զղթակի մի օղակը եղաւ : Դա արդիւնք էր Փարամազի ջանքերի : Հնչակեան Կուսակցութեան Հիմնադրաը , այդ շրջանի մէջ , նա էր դրել :

Փարամազի մի ոտքը Կովկաս է , միւսը Պարս-կաստան :

Նրա այդ ժամանակուաչ գրութիւնները զմացե-լի են :

1895—1897 չարագուշակ թուականն է : ՓԱՐԱ-ՄԱԶԻ իր խմբերի գլուխն անցնելով՝ 13 ահեղ ճակա-տամարտերից լետով՝ մտնում է Վան : Հազիւ մի քանի ամիս անցած՝ նա ճերբակալում է իր ընկեր-ներով (Ազատ Ոստանիկը մէկն էր իր զինուորներից) ,

դատապարտում է կախաղանի : Ազատում է Ռու-սայ եւ Ֆրանսիական կառավարութեանց տեղական ներկայացուցիչների ազգու միջամտութեան չնոր-հիւ : Փարամազի այդ ժամանակուաչ արտասանած մասը կը մնայ մի գլուխ-գործոց՝ Հայ Յեղափոխա-կան պատմութեան էջերի մէջ : Պատմական այդ գըր-ւագը մեր միւս նահատակ Ասօն արձանադրել է իր «Դատաստան» անունով գրքովի մէջ :

Փարամազ ուղարկում է Ռուսաստան , բան-տարկում է , ազատ է արձակում . իր գործունէ-ութիւնը շարունակում է :

Եթէ 1887-ին ծնուել էր Հնչակեան Կուսակցու-թիւնը , 1899-ին նա վերածնուել էր : Այդ վերած-նունդի մէջ էլ որոշեալ եւ մեծ բաժին ունի Փարամա-զը :

Գոլիցինեան շրջանն է :

Խլում են Հայ եկեղեցական , դպրոցական կալ-ուածները :

Փարամազը Բագուից ճանապարհ է ընկնում , անցնում է մի քանի հազար հոգուց բաղկացած պատ-գամաւորութեան գլուխն՝ Ս . Էջմիածին , Հայրիկի ա-ռաջն է կանդնում և արտասանում ընդդիմադրութեան պահանջագիրը՝ լանուն Սօցիալ Դէմոկրատ Հնչակ-եան Կուսակցութեան , լանուն ամբողջ Հայ Ազգի : Փարամազը , ժողովրդական այդ հսկորը , Հայ Դան-տօնը , նա այդ ճառի մէջն է՝ թեւերը , կուրծքը , սիր-աբն ու հոգին բացած . . . :

Եկեղեցական-դպրոցական գոլիքերի լավշտա-կութեան առթիւ առաջ եկած ընդհարումների , կը-ուիների մէջ՝ Փարամազի սիրագործութիւնները մի-այն սքանչացում կարող են բերել : Նա ամենուրեք է թռչած :

Գոլիցինը երգւում է մի Հայ չի թողնել կովկասի
մէջ եւ բոլորին թուրքեստան փոխադրել:

Ու Փարամազը կազմակերպում է Գոլիցինի աշ-
խարհագործ տեսորական գործը, որ Հայ Յեղա-
փոխական կեանքի մէջ կը մնայ մի անթառամ էջ:

Սկսում է Հայ-Թաթարական կոիւը: Շուշիի,
Զանգեզուրի շրջանների հրամանատարը Փարամա-
զըն է:

Հայ հերոսական էռուի այդ դրուազի մէջ՝ ժո-
ղովրդական ճշմարիտ հերոս է նա զառնում: Նա ո՛չ
միայն հազարաւորների կեանքն է փրկում, թշնամուն.
Ճախջախում, այլ իր մ՛ծահոգութեան, իր տղամար-
դութեան պատճառով՝ յարգւում է նո՛յն իսկ իր ե-
րէկուաչ թշնամիներից: Զանգեզուրի շրջանի թա-
թար ժողովուրդը (1906) հազարաւոր ստորագրու-
թիւններով՝ տասնեան համախօսականներ, հարիւ-
րաւոր շնորհակալական նամակներ ունի թափած Սո-
ցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան կելքո-
նական Վարչութեան՝ Փարամազի կատարած գոր-
ծերի, առաքինութիւնների համար:

Երեւանի աշու ժամանակուաչ նահանգապետը,
Ժէներալ Նասուէնը, Երա ճակատը համբուրեց, նը-
րա ճիռ ասպանդակը բռնեց, Ճի հեծցրեց ու յետե-
սից՝ «Ի՞նչ իրաւոլի մարդ է» աղազակից:

1905—1907-ին, Հնչակեանութեան մէջ ծաղում
է զաղափարի ուժեղ անհամաձայնութիւն, որ սպառ-
նում է հրապարակական դառնալ: Ընկերների մէկ
մասը որոշում է թողնել Տաճկա-Հայկական Դատը եւ
Ռուս Սոցիալ Դէմօկրատների հետ միանալով՝ րա-
ցանապէս Կովկասով, Ռուսաստանով՝ զբաղուել:
Ստուար մասը հաւատարիմ է մնում Տաճկա-Հայ Դա-
տին: Փարամազը այս վերջինի սիւներից մէկը եղաւ:

Եկաւ «Միտհատեան Սահմանադրութիւնը». Փա-
րամազը Տաճկաստան է վազում: Պոլսու եւ ըրջակացից
մէջ նա երեւան է գալիս՝ որպէս ուժեղ պրօվագուն-
դիստ:

Տեղի է ունենում Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան
Կուսակցութեան Զ.-րդ Ընդհանուր Պատգամաւորա-
կան Ժողովը՝ Կ. Պոլսու մէջ:

«Օսմանականութեան» գաղափարը պէ՞տք է ըն-
դունի՝ թէ ո՛չ: «Խտիիանի զէմ անողոք պայքար
պէ՞տք է մզել՝ թէ ո՛չ. 75-ի միջից միան երեք հոգի
էին, որ Կուսակցութեանս սկզբունքները անվթար
պահեցին եւ առաջացրին «Հակախտիհատականու-
թեան», «Հակասոմանականութեան» ծանօթ որոշու-
մը: Ազգ երեքի միջից մէկն էլ Փարամազն էր:

Թէեւ ծերացած, բաց նա Կեղբոնական Վարիչ
Մարմնի ներկայացուցչի պաշտօնով գնում է Տիգրա-
նակերտ, Խարբերդ, Մալաթիա, Կիլիկիա, վերջերս՝
Կարին, Վասպուրական: Ազգ շրջանների Հայութիւնը
կենդանի վկայ է նրա բեղմնաւոր գործունէութեան:

1913 Մէպտեմբերի 7-ին, Քէսուտէնջէի մէջ՝ կա-
յանում է Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցու-
թեան է.-րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողո-
վը: Համեստ այդ ժողովը իր որոշումներով, հետե-
ւանքներով, առանձին դարագլուխի է կազմում Հայ
Յեղափոխական պատճութեան մէջ՝ ընդհանրապէս,
Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան մէջ՝
մասնաւորապէս:

Ազգտեղ էր, որ որոշուեց Կուսակցութիւնը գը-
նել հակարինականութեան (իլլեգալիզմ) վրայ ու
պաշտպանել «Հայաստանի Քաղաքական ինքնավա-
րութիւնը՝ անջատ Թիւրքիայից» որպէս նուազ-

գոյն պահանջ :

Դա մի պատմական որոշում էր :

Վանից՝ այդ Պատգամաւորական Ժողովին ուղղուած էր Փարամազի նամակը, որով նա պահանջ էր դնում Յեղափոխական ուղին, հակաօրինականութիւնը ընդգրկել. դա մի վաւերաթուղթ է, որ ապագայ սերունդների համար դասական ընթերցանութեան նիւթ կարող է ծառալել. իսկական Փարամազը այդ տողերի մէջն է :

Եւրդ Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ Փարամազին ընտրում է Կեդրոնական Վարչութեան անդամ :

Հազիւ երկու-երեք ամիս Պարիզի մէջ, նա իր առաջին, նույիրական պարտականութիւնն է համարում նորից Տաճկաբուան մտնել եւ Պատգմ. Ժողովի Յեղափոխական, ապստամբական որոշումները դորձագրել :

«Ինքնավար Հայաստան՝ անջատ Թիւրքիայից».— Գաղափարաբաննը՝ առաջինը ինքը եղաւ, որ իր կեանքը զոհաբերեց իր գաղափարի իրականացման համար : Միթէ՞ ացպէս չէր արել Յիսուսը, Սոկրատէսը . . . :

Նոյնիք Փարամազի նամակներից :

«Եղածը («Միտհատեան Սահմանադրութիւն»ը) խաղաղութիւն չէ, այլ զինադադար» :

«Իտափհատ»ի զուլումը չափ ու սահման չունի» :

«Իտափհատ»ը որոշել է, որպէս երկրի զրութեան տէրը, թէ՛ իր ժողովրդի եւ թէ՛ Եւրոպական Պետութիւնների առաջ, իր վարկը բարձրացնելու եւ դիրքի տէլը մնալու համար, բաղկացուցիչ ազգութիւննե-

րից ո՛ եւ է մէկից «արեան տուրք» պահանջել, կոտորել: Վայրը, այս անդամ էլ պիտի լինի Հայաստան, ենթական Հայը» :— (Նամակներ՝ գրուած Տիգրանակերպից) :

«Պարսիկ, Թաթար խուժանը իր ձեռքերը բոլոր ներկով է ներկել, հինայել . . . Թուրքի ձեռքը Հայի արեան ներկով է ներկուած . . . սրա լուռ վկան են Հայ Լեռը, Հայ Զուրը, Հայ Հարսը, Հայ Երիտասարդը, ամբողջ Հայաստանը» : (Գրուած Մալթիացից) :

«Հայ Ազգի յառաջդիմութիւնը սաստիկ նախանձ է գրգոռում» :

«Տիրող Ազգի հանգման երկիւղը մուալ ամպի նման լողում է այս երկրի վրայ» :

«Իտափհատ»ը այդ զգում է» :

Փարամազը սովորութիւն ունէր ծաղկաքաղեր անել բոլոր լազոնի գրողներից . դրա համար էլ միշտ իր մօտ ունէր մի առանձին տեսրակ : Թէ բախտը որքան մեղ պիտի երջանկացնի անմահացած ընկերոջ ացդ ձեռատերերը ձեռք բերելու . . . դա ապագային պիտի մնայ :

Առ այժմս զանց չենք ուզում անել «ՃՈՒՂՈՒՊՐԻՍՆԵՐ»ի բնադրի վրայ՝ Փարամազի իր ձեռքով գրուած՝ հետեւեալ բնորոշիչ զուարձ անցքը մէջ բերելու :

«Քիրաճի Մեսրովի խնդիրք կը տայ Վալիին թէ Շաքիրը ինձ կողոպտել է: Վալին (նախորդ Վալին) ասում է շատ բարի՝ քո դատդ կը տեսնեմ: Յետոչ ինդրում է Մեսրովին, որ երկաթէ սնառուկը վերցը-

նէ եւ միւս սենեակը տանի: Շատ ծանր է լինում եւ Մերովը չի կարողանում, ու ասում է. «Վալի փաշա, սա մի մարդ չի կարող վերցնել»: — «Ապա դուի՞նչպէս ես համարձակում Շաքիր ազայի հետ գատի մանել, որը քանի՛ քանի՛ այսպիսի սնառուկների ծանրութեամբ ոսկի ունի»:

Թրքական արդարադատութեան հասկացողութիւնը և կեանքը աշտեղ որոշ կերպով դրոշմուած է:

Մի քանի խօսք էլ «նուլուալիստներ»ի մասին:

Թատերգութեան նիւթը, երեւում է, առնուած է Բագրուի 1904—1907-ի կեանքից:

Տիպերը ա՛ջնքան պայծառ, որոշ գծերով, կենդանի կերպով դուրս է բերուած, որ այդ մասին մի խաք ասեն անգամ աւելորդ է:

Անիշխանականը, Սօցիալ Դէմոկրատը, Սօցիալիստ Յեղափոխականը իրենց գաղափարաբանութեամբ այդ աեղ ուղղակի լուսանկարուած են:

Իսկ բուրժուաւ Հայ ընտանիքի պատկերը, նրան հասարակական գործունութեան և մասնաւոր կեանքի մասին ունեցած գաղափարները ա՛ջնքան վճիտ են, որ հարկաւոր է աչք դարձնել չորս կողմղ, որպէսզի այդ տիպերը բուռերով հաւաքեն:

«Ճշուալիստներ»ը խաղացել են Տիպահակերտի մէջ:

Երկու անգամ էլ ներկայացուել է Վանուամ:

Փարամազի իր ձեռքով գրուածից երեւում է, որ Վանի մէջ գերակատարներ են եղել մեր ողբացեալ հետեւեալ ընկերները եւ ընկերուհիները:


Սսխպով
Մանիս
Սահա
Սոնիչկա
Նատաշա
Միշա
Գրիշա
Նառամ
Ալեքս
Ստեօպկա
Արգուման
Գարեգին
Ոստիկան


ԱԲՐԱՀԱՄ ԲՐՈՒՏԵԱՆ
ԿԱԼԻՓՍէ ՍՈԼԱԽԵԱՆ
ՀԱՅՐԻԿ ՍԱՐՊԵԱՆ
ԱՐՏԵՄԻՍ ՍՈԼԱԽԵԱՆ
ՀՌԻՖՍԻՄԷ ԲՐՈՒՏԵԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՍՈԼԱԽԵԱՆ
ԵՐՈՒԱՆԴ ՍԻՄՍԱՐԵԱՆ
ՌՈՒԲԷՆ ԻՍԿԵՆՏԵՐԵԱՆ
ՔՐԻՍ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
ԿԱՐԱՊԵՏ ՏԱՆԹՕԵԱՆ
ՌՈՒԲԷՆ ՊԱՇԿԱԼԱՆՉԵԱՆ
ԱՀԱՐՈՆ ՊԱՊԻԿԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ՆԵՐՍԵՍԵԱՆ

Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1913, Յունվար 9-ին. իսկ երկրորդը, ժողովրդի պահանջին համեմատ, կրկնուել է նոյն ամսի 12-ին:

Ցոյս ունենք որ մեզ պիտի յաջողի ո՛չ միայն Փարամզի մանրամասն կենսագրութիւնը եւ նրա գործունէութիւնը մի ստուար հատորով հրատարակել, այլեւ ամէն ճիգ պիտի թափենք, ընկերների օդնութեամբ, որ Փարամազի բոլոր գրութիւնները, լինի տպուած կամ անտիպ, մանաւանդ նրա նամակները, ամբողջական մի հրատարակութեամբ լոյս ընծայուի:

Դրանով մի պարտականութիւն կը կատարուի ո՛չ միայն դէպի թանկագին ընկերը, այլեւ մի հասունացած գործ գրուած կը լինի մեր Յեղափոխական գրականութեան մէջ:





ՓԱՐԱՄԱԶ

ՓԱՐԱՄԱԶ

ԶԵՌՔԵՐԸ ՎԵՐ

ԿԱՐ

ՃՈՒՂՈՒՊՐԻՍՏՆԵՐ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵԲ ԳՈՐԾՈՂՈՒԹԵՄԲ

ԹՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ԴԵՊՔԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ 1907 թ. ԲԱՑԻԼԻՄ

—«»—«»—«»—

—«»—«»—

—«»—

—

ՏՊԱՐԱՆ
«ԵՐԻՏԱՍՍՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի

1917

ՇԻՔԱԿՈ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԽԵՏԻՔ ՕՍԻՊՈՎ՝ 60 տրկ. ՆԱԻԹ-ԱՐԴԻՒԽԱԲԵՐՈՂ
ՄԱՆԻԱ՝ սրա կինը 40 տ. ՆՈՐԾԶԵՒՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՂ
ՍԱՇԱ՝ սրանց որդին, 15 տարեկան, ԳԻՄՆԱԶԻՒՏ
ՍՈՒԻՉԿԱ՝ սրանց աղջիկը, 6 տարեկան
ՆԱՏԱՅԱ՝ 22 տ. ՍՈՒԻՉԿԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ
ԱՐՁՈՒՄԱՆ՝ 20 տարեկան, ՏԱՆՈՒ ԾԱՌԱՅ
ԳԱՐԵԳԻՆ՝ ՕՍԻՊՈՎԻ ՀԱՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ
ՄԻՇԱ՝ 25 տարեկան, ՃՈՒՂՈՒՊՐԻՍՏՆԵՐԻ ՊԵՏԸ
ԳՐԻՇԱ՝ հայ

ՍՏԵՕՓԿԱ՝ ռուս }
ԱԼԵՔՈ՝ հայ }
ՆԱՌԻՄ՝ հրէա }
ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

—o»()«o—

ԱՐԱՐԻԱԾ Ա.

—o»()«o—

Գործողութիւնը կատարում է Օսիպովի ցեղ
տանը, զարդարուած քամկարծէք նկարմերով
եւ մեծադիր հայելիթերով։ Աշ ու ձախ դրմեր։

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄԱՆԻԱ.— (Մի ժամի պտոյտներ է ամում եւ
մօտենալով հայելուն մազերը յարդարում է) Օ՛հ,
կեանքը սկսեց ձանձրալի դառնալ : Ե՛րբ պիտի դնանք
ամմարանոց այս ձանձրովիթը մեռցնելու, նոր կեանք
ամմարելու : (դադար) Միեւնոյն քաղաքը, միեւնոյն
գէմքերը, միշտ միեւնոյնը : Օրենքն էլ չուտ չեն անց-
նում, այս դժոխքից հեռանանք, ջերմուկները վա-
յելնք :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍՈՒԻՉԿԱ.— (Վազում է դէպի մայրը լացակու-
մած) Մայրի'կ, մայրիկ ջան, Սաշան դարձեալ զիս
ծէծեց :

ՄԱՆԻԱ.— Այսօր առաջին անգամն ես ինձ տես-
նում, չէ՞ : Միթէ քեզ հազար անգամ չե՞մ ասէլ, որ
երբ առաջին անգամ տեսնես մայրիկին, պիտի բա-
րեւես : Դէ՛, բարեւի՛ր :

ՍՈՒՆԻՉԿԱԼ. — (Բարեւելու ձեւ) Բարեւ, մակրիկ: (Ճեռքը համբուրում է) Ացեւս Սաշալին չեմ բարեւելու. նա ինձ ծեծում է: Նա շատ վասն է:

ՄԱԿԱԼ. — Բարեւ սիրունիկս (համբուրում է): Բաց միթէ՞ ալպակս է բարեւի ձեւը: Ես քեզ միշտ էլ սովորցրել եմ: Ապա՛ մի նորից ա՛յ, ալպակս: (Իմբը ձեւը ցոյց է տալիս) Անդիշկան կատարում է: Նկատելով հագուստը) Այս ի՞նչ է քո զրութիւնը: Ինչո՞ւ Նատաշան լու չի հազցրել քեզ: (Կանչում է) Նատա՛շա: Տարօրինակ ժամանակի ենք հասել: Ո՞վ էր տեսել աղախիճների այս օրինակ անուշաղբութիւնը: Մէկը չինի ասի՛ բացի երեխալին հագցնելուց էլ ի՞նչ գործ ունիս: Իւրաքանչիւր ամսադիմիկ բուռերով ամսականը համրի՛ր, քեզ հետ հաւասար կերցուր, խմացուր, եւ ի՞նչ է արածները, ալդ Աստած միան դիտէ: (Կանչում է) Նատա՛շա, Նատա՛շա: (Ելեքտրական զանգի կոնակը սեղմում է) Ո՞վ դիտէ, առաւտոր շառվ ո՞ւր է թրեւ զալիս: Այս աղջկան ձեռքից ուղիղ ցաւ ու կրակի մէջ եմ ընկել: (Միաժամանակ թէ զանգահարում է եւ թէ կանչում) Նատա՛շա, Նատա՛շա: Խուլանա՛ս:

ՍՈՒՆԻՉԿԱԼ. — Մակրիկ ջա՛ն, Նատաշան իմ սենեակումն է: Սաշան էլ է այնակող: Նատաշան նրա վրայ շատ է չարանում: Սաշան Նատաշալին ցաւեցընում է:

ՄԱԿԱԼ. — Սաշան էլ է ա՛յնակող: Հինց ալդ էր մնացել: Տղալիս էլ ուսումնարանից արեց: Զէ՛, պէտք է այս անզգամին դուրս քցել, թէ չէ որդուս հալ ու մաշ կանի: Դեռ աղջկաս դաստիարակին էլ է: Զէ՛, պէտք է դուրս քցել եւ ուրիշը վարձել: (Պառզա): Ենթաքրենք ուրիշը երերենք, չէ՛ որ նոյնն է լինելու: Քաղաքակրթութեան պառուզն է սա, որին մե-

զադրես, եւ ի՞նչ իրաւունքով մեղադրես: Ամենքն էլ աչսպէս են: (Ուժեղ զանգահարում է Ճեռնազանզով) Անտանելի՛ է, ուզգակի անտանելի՛ է այս աղջկան արարքը, սրա անհոգ վերաբերունքը գէպի ինձ: « ա՛րքան դուռզն էլ է: Ճիշտ են ասել՝ քաղցա՞ծ ու Համբատ: Գո՞նէ իր պաշտօնը կատարէ: (Նատաշան ներս է մանում, ախուր) Կեցչէ՞ք, զանզահարում եմ կոնցում, կանցում եմ զանգահարում, խակ դուր չէք բարեւածում ներս դալ: Մի՞թէ այս է ծառակի վայէլ պարտականութիւնը: Ի՞նչ է այս երեխալին վրան դը: Լուիթը: Զէր զործը առան մէջ միմի՛այն երեխալին Հարցնել-պահելու է եւ ո՛չ ուրիշ բաներ, որի համար ո՛չ ձեզ վարձել ենք և ո՛չ էլ իւրածնմ մէր տունը յարմարութիւն ունենայ:

ՆԱՏԱՇԱ. — Ծիկի՞ն, ես ձեզ չեմ հասկանում: Զբաղւած էի եւ զանդի ձայնը չեմ լսել, ուստի չկարծիմ այն չիշին յանի համար ինձ ուզգած այտ ակարիները վայէլ լինեն:

ՄԱԿԱԼ. — Գիտեմ զրադւած էիք, բաց այդ ը՛տ բազմունքի համար չէ, որ քեզ վարձել ենք: Երեխալին այնովէն էք պահում, կարծես կեղտոտ բանուրի կամ թէ հասարակ խանութպահնի երեխայ լինի: Հասկացչէ՞ք, որ մենք ևս ունենք մնի հայեացքները դիպի կեանքի դանաղան երեւութեները: Մենք եւս ունենք մեր հաւասարակիցները, մեր ուիրքն խնդիրը. վերջապէս երեխաս ակտոք է դուզւի իմ անսան վայէլ: Ի՞նչ է սա զրութիւնը: Փոխանակ ձեր պարտականութիւնը կատարելու, դեռ արժանապատութեան խօսք էք անում: Կարծում եմ նկատողութիւններս վերջնը կը լինեն, ալպակս ազատ էք իմ չարկի տոկ մնալու կամ չը մնալու մէջ:

ՍՈՒՆԻՉԿԱԼ. — Մակրիկ ջա՛ն, մա՛մա, Սաշան է

մեղաւորը, նա է Նատաշային ցաւեցնում:

ՆԱՏԱՇԱ. — Դուք ձեր նկատողութիւնները կարող էք անել, ինչպէս ես Եւս իմ գիտնավիճա:

ՄԱՆԻԱ. — Օհօ՛. զա բանուորական սէնդիկայի ո՞ր յօդածի որերորդ կէտն է: Բը՛ռուա՛զօ:

ՆԱՏԱՇԱ. — (Անդաբր, ծամր եւ առաջանութեամբ) Դա այն կէտն է, որով մեղ պէտ ըիւրաւոր աշխատաւորների քրտինքի եւ արեան չաղախով կտուցւել են այս պաշարները, եւ որոց մէջ զուր զեղութիւնների հետ միասնեղ զեսկելու էք տրցամացանքի եւ ամբարտաւանութեան ողին: Գնա՞նք, Սոնիչէա: (Երեխայի թեւից բանած դուրս է զնում)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՄԱՆԻԱ. — (Երկար նայելով Նատաշայի ետեղից) Դէ, եկ ու մի տրաքուիք: Թրական հազար անդամ զուռդ ծեծում են, ազաջում, պազատում, ոտներդ պաչում, պաշտօն ինչորում, եղբ ուներին տեղ են անում, եկ ու լեզունների տակից դուրս եկ: Մեր բազոն է այսպէս: Եւ զարմանալին այս է, որ ամենքն են այսպէս, մանաւանդ այս անհպամ ուռաները: Ի՞նչ կարող ես անել: Կուրանան ոտքիալիստներն ու նրանց պիխաւորները այնքան արին, արին ու այս անզգամներին մնը զլուխը հանեցին: Աշխարհի համըն էլ փախցրեցրին... Ո՛չ խանրմութիւն մնաց եւ ո՛չ աշ աղախութիւն: Չես կարողանում ո՛չ նկատողութիւն անել եւ ո՛չ էլ դործ անել տալ: (Մտնում է Արգումանը) Ա՛յ, մէկն էլ սա. Համեցիր մի փոքր ծանր խօսք ասա՛, իսկոյն այծերը տուն կդան եւ ո՛վ գիտէ, ի՞նչեր ասես բերնից դուրս չի թափիլ:

ԱՐՁՈՒՄԱՆ. — Խանըմ ջա՞ն, ուրիշի վրայ չարանում ես, քարը իմ գլխին ես կոտորում: Ի՞նչ էք հրամայել, որ ձեռաց չեմ կատարել: Ինձ էլ էն գոռող նատաշայի ոտովին ես տանում, ես ձեր խոնարհ ծառան եմ, ձեր տան շրմը: Նա իսկի մնզ էլ չի մարդաբանել զնում: Հազար անդամ խօսցնում ենք, բան Ենք հարցնում, միանդամ հազիւ է պատասխանում, այն էլ կիսատ-պուտ բերնով: Խանը՛մ...

ՄԱՆԻԱ. — Լա՞ւ, լա՞ւ: Խոհարարին ինչ հարին է պատվիրել եմ, նա ինչ կատի՝ կառնես: Ա՛յ աղա, քեզ հազար անդամ ասել եմ պարէնները Մելիքովենց խանութից գնիր, ի՞նչ ես զնում, կեղտուո բազգալ-ների մօտ ու նրանցից առնում: Բանւորի համար ես առնում, ի՞նչ է: Քանի անդամ քեզ ասել եմ, որ նրանց ապրանքները վաստ են, կեղտուո են, ո՞վ զիտէ ինչ կեղտուո ամանների մէջ են պահւում, մանաւանդ նրանց կեղտուո ձեռները: Եթէ միւս անդամ լսեմ նրանցից ես տուել, դուրս կը զցեմ: Մեզանից պականները Մելիքովից առնեն, մենք զնանք ու մուռ-տառ բազգալներից առնենք:

ԱՐՁՈՒՄԱՆ. — Խանըմ ջան, խաչը վկաչ, թէեւ Մելիքովենցը բազգալներինց այնքան էլ լու չէ, բացց ես գարձեալ Մելիքովից եմ առնում: Ինչո՞ւ պիտի խանըմիս սիրոց կոտրեմ: Զեր դրամով եմ առնում, որուեղից ուղէք, էն տեղից էլ կ'առնեմ էլի:

ՄԱՆԻԱ. — Բաւեկան է, չատ չեն խօսալ: Առայս տասը բուրլին եւ զնա՛ խոհարարի մօտ, տէ զը-նա՛: (Արգումանը զնում է. կանչում է) Է՛յ, ա՞յ տղաչ, Արդուման, (ներս է գալիս) դո՞ւ էլ ես մտել այդ բանուորական սէնտիքա է, ինչ է, նրա մէջ, չը՛, դո՞ւ էլ ես անդամ գրւել:

ԱՐՁՈՒՄԱՆ. — Ի՞նչ սէնտիքա, խանըմ ջան: Իմ

սէնդիկան էլ էք դուք, մէնդիկան էլ: Ես էդ պէս բաներ չեմ հասկանում: Մտել եմ ձեր տունը, ձեր աղու հացը ուստում եմ ու էզ աղու հացը չեմ մոռանալ: Ես ձեր խոնարհ ծառան եմ: Դուրս էլ անես, խանըմ ջան, դուրս չեմ դալ: Ինչո՞ւ գժւել եմ որ էստիս լաւ տեղը, քեզ պէս լաւ խանըմը թողնեմ ու ով գիտէ ինչպիսի տեղ ընկնեմ: Զէ՛, չէ՛, չէ՛: Խաչը վկաչ, թէեւ ուրիշ ծառաներ շատ են ասում, բաց ես զաջախնցի եմ, իմ խելքին կը նայիմ:

ՄԱՆԻԱ. — Ա՛յ, ապրիս, որդի, ացդուչս խելօք մնաս, այս տունը մշտական քոնն է: (Պատկա): Ակերը այդ ինչ է քո հալը. ինչու քեզ չէնք ու շնորհ-քով ու մաքուր չես պահում: Ացդպիսի սիրուն աղան, ացդպիսի նաշխուն աչքեր ունենայ ու ացդուչս կեղտուու պահի՞ (Շոյում է երեսն ու աչքերը, փաղաքա-կան տարդումներ է անում, որը հետզիեսլ փոխում է տոփանի): Արզումանը չէմեղ ձեւանալով իր տար-ժումներով, տեղի գրգռում է): Ի՞նչ գեղեցիկ աչքեր ունիս, ի՞նչ սիրուն պեխիք: Ո՞չ, Արզուման (յան-կարծ համբուրում է ուսեղմալ զրկին): Դու էլ ինձ համբուրիք, ա՞յ, այստեղս (ցոյց է տալիս աչքը), ացդուչս. ա՞յ, այստեղ էլ. (ցոյց է տալիս ու դիմ ա-նում երեսը), ա՞յ, ացդուչս: Քեզ համար լաւ հա-գուստներ եմ կարել տալու: Ինչ ուզես տալու եմ: Ասա՛, ասա՛, ի՞նչ ես ուզում, ասա՛...

ԱՐԶՈՒՄԱՆ. — (Որ համբուրում է, սեղմում ու այդ դրութեան ժամանակ ասում է) Ոչինչ չեմ ու-զում, խանըմ ջան, քո ողջութիւնդ եմ ուզում: Մի-այն ացդախն ասա ամսական մի փոքր աւելացնի, խանըմ ջան:

ՄԱՆԻԱ. — Շատ լաւ, ալսօրւանից քո ամսակա-նը կաւելնայ: (Այդ միջոցին արդէն ներս է մտնի

նատաօան եւ արհամարտական տօնով նայում էր նը-րանց: Դարձեալ մի քանի համբոյք): Տէ՛ լաւ: Գնա՛: Աչ ոքի բան չես ասել, եթէ լսեմ ասել ես, դուքս կը դցեմ, օդակցդ կը զրկւես: Դէ զնա:

ԱՐԶՈՒՄԱՆ. — Խենթ եմ, ինչ եմ, ասեմ, որ համ օվուալից զրկւեմ, համ էլ քեզ պէս լաւ խա-նըմից: Միամիտ կա՛ց, Արզումանը այնքան էլ խենթ չէ, նա իր հաշիւը լաւ գիտէ: (Գնում է)

ՄԱՆԻԱ. — (Կանչում է) Արզումա՞ն, ա՞յ տղալ, Արզումա՞ն: (Դուրս է գնում նրա նտեսից)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՆԱՏԱՋԱԾ. — Եւ դեռ ասում են՝ «Մեր տունը արժարութիւն չունի այց բանի համար»: Աղորմե-մներ: Աւմն էք իսարում, ո՞ւմ: Ձեր կողմումն է՝ շահագործութիւն ու աւեր, կեղեքում ու քաջալում. ձեր նպատակը՝ զեղսութիւն եւ անառակութիւն, եւ միակ յարմար ու պատեհ տեղը ձեր ու ձեր նմանների տներն են, որոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ Բաղոսի մեհեաններ: (Պատկա) Սողո՞մ, Սողո՞մ, Սողո՞մ... (Պատկա, քայլում է): Որդին սիրում է ինձ, եւ իր բոլոր ժառանձութիւնը իմ մի համբուրի հետ է փո-խանակում: Հայրն էլ է սիրում ինձ եւ իր բոլոր կաց-քը, գուշը, իր բոլոր միլիսնները իմ մի հատիկ հոմ-րոցիս հետ է փոխանակում: Մացը... նա էլ սիրում է ծառացին եւ տուն, տեղ նրան է խոստանում: Մի-րում են, սիրում եւ մեր եղբայրների արեան գնով կառուցած տներն ու ուսկինները իրարից ծածուկ մեր սիրուն են զոհաբերում, մեր աշխատանքով մեզ ըս-տորնական զրութեան մէջ են դնում... Սողո՞մ, Սո-

հարական ձեւեր անում ու արտասանում)

— 12 —

զո՞մ, Սողո՞մ (պառլա): Եւ մեզ են մեղադրու անբարուականութեան մէջ: Մեզ են մեղադրում չո՞ս ո՞ի եւ անպարտածանաչ ընթացքի մէջ: (Պառլա): Աւումդ մեծ յառաջդիմութեամբ աւարտիր, մնւի վեհ գաղափարներով, գիշեր, ցորեկ, մարդկութեան օգտակարութեան համար մտածիր եւ...ահա գոյութիւն ունեցող կարգերը, հացի գաժան խնդիրը քեզ ձգեն մի այնպիսի դրոթեան մէջ, ուր միայն եւ մի այն «սիրում Են», «սիրում են», հա՛, հա՛, հա՛... եւ քո պատիւր, քո «ներքին մարդը» ամեն ըստի իրենց գաղանական եւ իւրավայել կրքերին զոհ բերելու ոստայներ հիւսում: Զկայ վեհը, չկայ բարին, չկայ եւ ոչ մի սրբութիւն: Շուի՛ր, ստորացի՛ր, սո՞ղա՛ ամեն մի քայլափոխում եւ քեզ կարժանացնեն իրենց տիրական չնորհներին: Ա՞յս է միթէ կեանքը, ա՞յս է միթէ նրա ներքին իմաստը: Օ՛, դառն է դառն: Եւ դեռ ստիպում են ինձ այս եւ այն կերպ գաստիարակել իրենց զաւակներին: Դժոխք է, ուղղակի դժոխք: (Պառլա): Սիրում են... Սիրում են... (Պառլա): Սաշայի երգը կուլիսների յետելից: Առաջին կուլիտը նատաշան պօզա բոնած լսում է, երբ վերջանում է, շարունակում է) Ասա եւ «Սիրում եմ»ի մէկ պրակը: Նա եւս իր մեծերի ընթացքն է ուսումնասիրում կեանքի ապագայ զործունելութեան համար: Եւ ինչո՞ւ պիտի չանէ, քանի որ ուր բանց զեղս, անբարուական եւ անառակութեան շրջանի պահանջը այս է:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱԱՃԱ. — (Երգելով մտնում է թեմ եւ տեսնելով նատաշաին ծունկ է չոփում եւ արձանացած սիրա-

Ասողիկն ես դու լոգարանից դուրս եկած,
Թէ Աֆրոթիս՝ սիրոյ մահից նոր ելած.

Յօղի՛ր, թափի՛ր սիրոցդ դոհար շիթերը,
Տե՛ս, տե՛ս, ոտներիդ տակ քուրմդ է ինկած:

ԱՌէ, աստւածս, կուռքս, աղաւնեակս, հրեշտակս
սիրում եմ քեզ: Մի ակնարկ, մի ժպիտ, գէթ մի
համբոց (ցատկում է եւ դէպի նատաշան): Ահա՛,
բոլոր ունեցածս քեզ, ահա՛ (հանում է օամացոյցը,
դրամները): Քո աչտ աչերը, քո իրանը, ո՛հ, գե-
ղեցկութեան թագուհի: Օ՛, սիրում եմ քեզ: Ա՛ս,
առ գէթ մի համբոցը...

ՆԱՏԱՇԱ. — (Աշխատելով ազատիլ) Զեզ մի
փոքր լուրջ պահեցէք, պարոն: Հասկացէք, որ ձեր
առջեւ կանդնած է մէկը, որ նա էլ մարդ է, նա եւս
ունի իր «ես»ի ներքին ձախնը: Զեզ քանիցս ասել եմ
եւ աչժմ վերջին անդամ կրկնում եմ՝ փոխանակ
«սիրելու», լաւ կանչէ, ձեր դասերը սովորէք, որ-
պէսզի դասարաններդ փոխէք: Պահանջում եմ լուրջ
պահել ձեզ:

ԱԱՃԱ. — Ի՞նչու աստւածները աչտ թանձրա-
ցած գեղի մէջ սրտի դանդաղ բարախն են զետեղել:
Գէթ մի համբոց, հոգեակս... Սիրում եմ քեզ...
(ոյժի է դիմում):

ՆԱՏԱՇԱ. — Զգո՞չ եւ լուրջ. ձեր բերնից գեռ
կաթի հոտ է դալիս, գեռ ձեր...

ԱԱՃԱ. — Օ՛հ, ես. նայեցէք ընչափներս, ես
առնացել եմ, ևս ալբում եմ, ես սիրում եմ:

ՆԱՏԱՇԱ. — Վերջապէս դուք սահմանը անցու-
տիք: Ես ձեզ չեմ սիրում եւ ատելով ատում եմ. բա-
ռակա՞ն է: (Զանգակի ձայն): Հեռացէ՛ք, հացդ գա-
լիս է:

ՍԱՇԱ. — (Օդային համբոյր. փախչում է դրա մօտ եւ նոյնը կրկնում ու դարձեալ դառնում) Աշնու ամենաշնիւ դու իմս ես եւ պիտի լինիս : (Արագ գր նում է ու յետ նայելով) Սիրո՞ւմ եմ քեզ : (Դուրս և վագում) :

ՆԱՏԱՋԱ. — (Ծամր ու վիհ քայլով) Ի՞նչ ցոյս բոլ ի՞նչ տեղ ընկար, խե՞զ Նատաշա : Թոյն է արտաշնչում չուրջդ, մահարեր թոյն : Սողո՞մ... Սողո՞մ... Սողո՞մ . (դուրս է գնում) :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

(Ներս են մտնում Օսիպով եւ Գարեգին)

ՕՍԻՊՈՎ. — Այսպէ՞ս, ուրեմն դործերը լաւ են դնում : Դա շատ ուրախալի է :

ԳԱՐԵԳԻՆ. — Այս, պարոն Աւետիք, շատ լաւ է, այնպէս որ դժողոհալու տեղիք բնաւ չունինք : Նախահորերը՝ բոլորն էլ կանոնաւոր զրութեան մէջ են եւ ժամը ժամի վրայ լաւանում են : Օրական վաթուն հաղար պուտ զուտ արդիւնք ունինք, իսկ նէֆ թի դինն էլ, փառք Աստծոյ, գիտէք որ հետզհետէ բարձրանում է : Այս ամենի վրայ, մեր բաղդից համար 25 հորը Փոնտան է խիստմ, այն էլ շատ մաքուր ցոյս կաէ 10-15 օր խիմ՝ օրական հարիւրից՝ հարիւր քսան հաղար պուտ նաւթ տալով : Եթէ այսպէս գնաւու լինի, այնու ոչ մի իրաւունք չունինք մեր բաղդից դժողոհալու :

ՕՍԻՊՈՎ. — Դրանք ամենքն էլ ուրախալի լուրեր են, շատ բարի, բայց այդ միրը բանուրները շատ մտահոգութիւն են պատճառում ինձ : Երբ ամեն կողմից Աստւած իր բարիքն է չնորհում, հորերը

այզպէս լա՛ւ, գիներն էլ բարձր, յանկա՛րծ այդ սրիկաները գործադուլ չանեն ու մեզ կրակի մէջ քցելով՝ տուններս քանդեն : Ե՞րբ պէտք է նախկին դրութեան մէջ մտնենք ու զգաւունք այդ ծով եւ բաղդատահանջ անալիտաններից :

ԳԱՐԵԳԻՆ. — Միամիտ կաց, պարոն Օսիպով, նրանցից ոչ մի վախենալու բան չունինք : Նրանց գըլիին այն խաղն եմ խաղալու, որ գործադուլ անելը ազլեւս մտքներովը չի անցնիլ : Ենթագրենք թէ մի քանի անմիտներ ինւլքներին զու տալով անեն, չհաւատաս որ երկու ժամ տեւի, ինչ մնաց կէս օր : Այդ գործը ինձ թո՛ղ : Գարեգինը գիտէ ինչ է անում եւ ինչպէս է անում :

ՕՍԻՊՈՎ. — Ի՞նչովէս . այդ ի՞նչպէս ես արել եւ ե՞նչ :

ԳԱՐԵԳԻՆ. — Ա՛յ, թէ ինչպէս . բաժանեա՛ զի տիբեսցես : Սա շատ գեղեցիկ սկզբունք է, եւ ոչ մի կառավարիչ չի կարող իր գործերը կառավարել, եթէ այս սկզբունքը եւ նրան հասնելու միջոցը՝ տաքափկը չիմանայ : Փա՞ռք Աստուծոյ, մենք դառավարիչ ինժինեորներս այդ լաւ ենք ուսումնասիրել :

ՕՍԻՊՈՎ. — Կեցցե՞ս, կեցցե՞ս, քո հանգուցեալ հայրն էլ շատ ընդունակ էր, մանաւանդ այդ տեսակ գործերում :

ԳԱՐԵԳԻՆ. — (Ոգեւորած) Հայկական ողին մտցրեցի բանուրների մէջ՝ երկպատակութեան, անմիաբանութեան ողին : Կուսակցական թշնամութիւնները ստոր կերպարանքի մէջ դրեցի : Լեւոնին արդէն հանաչում էք, նա պատմական անձնաւորութիւն է : Նրա ամսականը տաելացրեցի, օդնականի պաշտօն էլ խոստացայ տալ այն պայմանով, որ բանուրների մէջ նոյն իսկ իրար սպանելու աստիճան խոռվութիւն

սերմանէ : Եւ քաջի համար այդ բանը մի բաժակ ջուր խմելու պէս եղաւ : Շատ լաւ կատարեց իր դերը : Աչժմ մեր բանորների մէջ օր օրի վրայ սպասում է ընդհարում : Այս աշապէս լինելով՝ չէ՞ք հաւատում, որ նրանք այդ վիճակի մէջ չեն կարող միանալ եւ միարանական քայլեր անել : Այդ կողմից բոլորովին միամիտ կաց - դոնէ ես դրան երաշխաւորում եմ :

ՕՍԻՊՈՎ . — Կեցցե՞ս, կեցցե՞ս, շատ չնորհակալ եմ : (Մօտենում է զանգին եւ զանգահարում) :

ԴԱԲԵԳԻՆ . — Զէ՛, մենք մեր ինժենիոր տեղով, մնր ուսումով նրանց ձեռքին խեղճ ենք մնալու : Նա որ երէկ ինձ մարդասեղ չէր դնում, այժմ շունս է դարձել :

ՕՍԻՊՈՎ . — Այսպէս, ուրեմն հրապարակը դարձեալ մէրն է : (Մտնում է Արգումանը խորքից) : Ա՛յ տղա, Արգուման, մի երկու շիշ շամպայն բեր :

ԱՐՁԱԽԻՄԱՆ . — Այս բոպէիս, աղա' ջան : (գընում է)

ՕՍԻՊՈՎ . — (Խորիրդաւոր ձեւ տալով իրեն) Բայց չգիտեմ ի՞նչ պիտի անել, որ, այսպէս ասած, դարձեալ եկամուտներս շատացնենք, եւ, այսպէս ասած, մրցակից չունենանք : Ես ցանկանում եմ, դիտես, մէկ հատ լինել : Սրանից շատ ուրիշ մտածմունք չունիմ : (Ներս է մտնում Արգումանը եւ մատացարանի մէջ թերում է շիւերը ու կամենում է լեցնել) : Հաւ, դնա՛, ես ինքս կը լեցնեմ : (Արգումանը դուրս է գնում) Լեցնում է եւ անմիջապէս Գարեգինի բաժակին խփելով, խում է :

ԴԱԲԵԳԻՆ . — Դարձեալ մէկ հատ էք, պարոն Աւետիք, դրանում կասկած չկայ : Բայց, ի հարկէ, (խում է) միշտ պէտք է աշխատիլ նաւթալին թագաւորութեան մէջ ազդեցիկ տեղ դրաւել : Դրա հա-

մար ես խորհուրդ կտալի, որ մեր փորելու եւ քաշելու ձեւը փոխենք. մեքենաները այն ձեւի վերածենք, որ բանորական ձեռները քիշանան, որովհետեւ դըրանք են մեր եկամուտի մեծ մասը կլանում, թողնենք դեռ գործադուլը եւ նւէրները, վնասւածների վճարը և ո՛վ գիտէ հաղար ու մէկ ծախսեր : Կամ նոյն իսկ ...

ՕՍԻՊՈՎ . — Է՛յ, թէեւ ինժենեօր ես, ուսումդշատ է, բայց դեռ անփորձ ես, կեանքի մէջ չես խըփուել : Դրանից բան չի դուրս դալ. պէտք է, ինչպէս ասում են, անծախս շահ, պատրաստի շահ : Գիտե՞ս, պատրաստի՛ շահ . (լեցնու մէ) կենացդ, Գարեգին (խում են) . բայց շատ անփորձ ես : (Գադար. որպէս թէ մտածում է) Սրան Բագու կասեն, ով չուստ, նա կուշտ : Այստեղ ձեր կուլուրան, ձեր ցիւլիզացիան կէս կոպէկ չարժէ : (Նոյնպէս) Այստեղ ուրիշ կերպ պէտք է վարւիլ : (Նոյնպէս) Այստեղ ամենքն էլ ուրիշ կերպ եր վարում . Հէնց ինձնից սկսած ամենքը : (Նոյնպէս) Սա Բագու է . պէտք է դիւրին միջոցի դիմել : Քո մտածածներովդ այստեղ ոչինչ չի դուրս դալ : (Նորից լեցնում է եւ խում են) : Շատ անփորձ ես Գարեգին ջա՛ն, շա՛տ

ԴԱԲԵԳԻՆ . — Ճիշտ է շատ անփորձ եմ, բայց փորձածների փորձերից շատ շուտ կարող եմ օդուլուիլ : Եւ իմ միակ ընդունակութիւնը հէնց դրա մէջն է :

ՕՍԻՊՈՎ . — (Զանգահարում է) Շա՛տ, շա՛տ անփորձ ես, Գարեգին ջա՛ն : Բաքուն չես ճանաչում : Հէնց մեղ էլ նաւթալին իշխաններիս էլ չես ճանաչում : (Ծառան մտնում է) Ա՛յ տղա, մէկ էլ բեր : (Ծառան գնում է) Այս ամսի գլխին մէկ միլիոն երկու հարիւր հաղար պուտ նաւթ պիտի տանք թարաւան Բայո Խոտեկա 2P

լուսկում, արդե՞օք կարող ենք: Գիտես, որ եթէ չկարողանանք հասցնել, պայմանները շատ ծանր են:

ԳԱՐԵԳԻՆ. — Շատ քիչ է պակասում, շոտք կը լրացնենք: Հոգս մի արէք բնաւ, ուզում է մէկ ազդեան էլ կը տանք: (Ներս է բերում ծառան ժիշը ու գնում: Խմում են):

ՕՍԻՊՈՎ. — Ա՛խ, Գարեգին ջան, միայն մի դարդ ունիմ, այն է առաջին տեղը րունել: Բայց շատ անփոք ես: Աշխատանքը, շահը որսի նման մի բան է, պէտք է իր դիրքի մէջ խիես, հակառակ դէպօւմ՝ զնաց, ո՛չ տեսանես: Ա՛յ, Ռոչիլդը, Ռիվկին, Սարգսովը... (խմում են) միթէ՞ նրանք այդպէս չեն արել:

ԳԱՐԵԳԻՆ. — Զեր փորձառութիւնից կօդուիմ: զուք մեր ինժեներներիս գործնականութեան դաստիքն էք: Ասացէք եւ ամեն ինչ պատրաստ եմ անելու, միայն թէ ասացէք: Զեմ կարծում ինձ վրայ վստահութիւն չունենաք, որովհետեւ ոչ մի բանով ձեր վստահութիւնը չեմ խսիսեւ:

ՕՍԻՊՈՎ. — (Լեցնում, խմում ու հազում: Պառագա) Պէտք է զողանոյ, զողանալ:

ԳԱՐԵԳԻՆ. — (Բաժակը բերեց յետ է քառում, ու աշխերք չանձ, զարմացել նայում եւ երբ Օսիպովին համգում է, խմում է):

ՕՍԻՊՈՎ. — Եղրա՞յր, ի՞նչ զողանալ: Աւազակների պէս լեռները չենք չափչփում ու խեղճ ու կրակ ժողովուրդի տունը քանդում: Կամ նոյն իսկ «Զեռքերդ վեր» երի նման ոռութներ չենք ցուում ու շատ, շատ մարդեր լացացնում: Ռերիշները ինձնից են վերցնում, ես էլ ուրիշներից, իսկ քաջը ամենքից: Ի՞նչ ես զարմանում, չէ՞ որ սա հէնց Դարւին էք ասում, ի՞նչ էք տառմ, նրա քարոզածն է, դուռութեան կոիր

է, տակի մնացողի հողին դուրս գայ: Եւ ո՞վ չէ այսպէս: Ամենքն են, ամենքը, նոյն իսկ իմ կինս՝ Մանիան, ինձնից է զողանում: Ես քեզնից եմ զողանում, դու նրանից, նա միւսից եւ աշխարհը պըտցուում է, հա՛ պատում: Սա բնական օրէնք է եւ ամեն մարդու հողու մէջ բուն է զրած: Միայն ծոյւերը, թուլերը եւ վախկոտներն են, որ զուրկ են այս բնական օրէնքից, որով զուրկ են եւ աշխարհի բուրով վաշելքներից: Ողորմած հողի հայրէ ասում էր՝ «Շատ մարդ չնից վախենալով գողութեան չի գնում ու ասում է սուրբ Եմ»: Եւ շատ հեշտ էր ասում ողորմածհողին: Բաւական է, եղբայր, մոռացէք այդ նախապաշարումները: (Խմում է) Պէտք է զողանալ: Ա՛յ, մեր հանքամիջով քա՛նի, քա՛նի խողովակներ են անցնում: Հէնց Լեւոնի միջոցով կարելի է անել: Խմացան՝ Լեւոնին ինչ պիտի անեն, չխմացան՝ հօ՛, օդուտ է ու օդուտ: Ի հարկէ Լեւոնին լաւ կը վարձատրես. Թո՛ղ նա էլ հարստանաչ, չէ՞ որ նա էլ է ազգի համար չարչարել: Պաշտօնն էլ բարձրացուր: Եղրա՞յր, պէտք աշխատել, աշխատել, ամեն կերպ աշխատել: Սա Բաքու է, ամեն ինչ պիտի անել դրաժի համար, քանի որ զրամն էլ ամեն ինչ է: Տեսա՞ր որ անփորձ ես: (Լեցնում է իր և Գարեգինի բաժակը)

ԳԱՐԵԳԻՆ. — (Կանգնելով եւ բաժակը ձեռին բարձր պահելով իրը թէ բաժականառ է ասում) Պատրաստ եմձեր փորձառութիւնից օգտուելու: Յոյս ունիմ ինձնից դո՞ւ կմնաք, եւ շատ շտով ամեն ինչ՝ թէ հանք, թէ դրամագլուխ կրկնապատկւած, քառապատկւած կտեսնէք: Զեր կենացը: (Խմում է ու ձեռքը մեկնում է բարեւի) Ներեցէ՞ք, ես հանք պիտի զնամ, մի քանի անկետաձգելի գործեր ունիմ կատարելիք: Վստահ եղէ՞ք, ամեն ինչ նոյն իսկ վաղ-

ւանից կլինի : Յտեսութիւն :

ՕՍԻՊՈՎ .— Յտեսութիւն : Վստահ եմ : (Առաջնորդում է մինչեւ դրուը) : Գարեգին ջան, ձեր ամսականին այսօրւանից հինգ հարիւր աւելացրէք : Յտեսութիւն :

ՏԵՍԱԲԱՆ Է .

ՕՍԻՊՈՎ .— (Ձեռները տփելով պտտում է) Բաղդըն էլ է այս, փառքն էլ, էլ ինչ ես դարդ անում, Աւետիք Օսիպով : Ի՞նչո՞ւ է պակաս : Մէկ միջր քո անցեալը, օ՛, ո՛րքան զգւելի էր նա : Ի՞նչ կլինէր քո դրութիւնը, եթէ մինչեւ այժմ կապւած լինէիր այն անհծեալ գիւղական կեանքի հետ : Յետ ընկած մի գիւռում, գիշեր, ցերեկ բուք բորանի մէջ, հրատապ արեւի տակ, սարերում, չեօլերում տանջւի՛ր, մաշւիր թէ ինչ է՝ օրական մի քանի կոպէկ պիտի աշխատիս, այն էլ ո՛վ գիտէ կարողանաս, թէ չէ : Ի՞նչ էր այն իմ քաշածներս . էշի պէս աշխատիր — դարձեալ մերկ, բորիկ, դարձեալ սոված : Եւ ի՞նչ լաւ, որ մի գոյց տրեխներս առի ու հագու փախաչ : Եւ ինչպէս չփախէի՛ նիղակը չի կարող քսակի մէջ տեղաւորւիլ : Աւետիք Օսիպովը գիւղի համար չէր ծնւած, նա քաղաքի մէջ պիտի հասնէր իր փառքի բարձրութեան . . . Եւ մի քանի տարւան տոկուն աշխատանքը, որի ճանապարհը միայն ես գիտեմ, միլիոնների հետ է խաղացնում ինձ : Աւետիք Օսիպով աղքատ գիւղացու զաւակը միլիոնատէր ու քաղաքի առաջնակարդ մարդկանցից մէկը . . . (Պատրա) Եւ դեռ ոչխարամիտ Գարեգինների ու ափիրիստ Լեւոնների մէջքի վրայով շատ կը բարձրանամ : (Պատրա) Աշխարհու գմակ է ու դանակ, կտրի՛ր ու կեր, եւ ո՛րքան շատ

կտրես, այնքան էլ պատւով ես (զանգահարում է) թո՛ղ սեւ անցեալը իր բոլոր սեւութիւններով մոռացւի : Լողա՛ ներկայի նեկտարի մէջ, լողա՛, ապագան էլ քոնն է . . . (մտնում է Արգումանը) Ո՞ւր է իսանըմը, Արզուման :

ԱՐԶՈՒՄԱՆ .— Աւադովենց տունը գնաց, այնտեղ խանըմները թուղթ են խաղում : Աղա, ասաց ձաշին հացի եմ գալու, որ լուսոց այս երեկոյ գնալու է Միրազովենց տուն . . . բալ (երեկոյթ) ունին :

ՕՍԻՊՈՎ .— Նատաշան ո՞ւր է, տա՞նն է :

ԱՐԶՈՒՄԱՆ .— Աղա, իր սենեակում զիրք է կարդում : Շատ հպարտ է, խանըմի խօսքը չի լսում :

ՕՍԻՊՈՎ .— Լա՛ւ, այդ խանըմի գործն է : Գնա՛ Նատաշային ասա գայ ինձ մօտ, իսկ դու զնա՛ քո գործիդ : (Արգուման վերցնում է տիեզերը, զնում է) Ա՛խ, երանի թէ մի քսան տարով երիտասարդ լինէի, Եւ ի՞նչեր չէի տալ դրա գոխարէն : Երիտասարդութիւն . . . Եւ այն ժամանակ զւարճութիւնը աւելի վառ գոյներով կարտացոլար սրտիս խորքերի մէջ : Օ՛, որքան տղեղ է աշնան տերեւը իր տերեւաթափով : Նու մահւան հեռանկարն է . . . Երիտասարդութիւն, Երիտասարդութիւն . . .

ՏԵՍԱԲԱՆ Ը .

ՆԱՏԱՇԱ .— (Ներս մտնելով) Դուք էիք հրամացէլ ինձ կանչեն :

ՕՍԻՊՈՎ .— Այո՛, սիրելի Նատաշա, կեանքիս ուրախ վալրկեաններում սիրում եմ ձեղ տեսնել, ձե՛ղ, որ կեանքի գեղն ու ձգտումն էք, նրա ոլորտների կեզրոն էք, Եւ լոյս ունիմ չէք զրկիլ ինձ այդ վեհ եւ ասուածային բարիքից : (Մոտենալով) Ո՞ւ,

Թողէ'ք այդ ոլորտների մէջ տարւիմ դէպի աճնաեղ, այն վայրը, ուր...

ՆԱՏԱՇԱ. — Զափաւորեցէք ձեր թոփչքները, պարոն, որը աճնքան էլ համապատասխան չէ ձեր դիրքին եւ ընտանեկան կոչման: Ասացէ'ք ինչ հրամաններ ունէք, որը անմիջապէս վերաբերում է իմ պաշտօնին:

ՕՍԻՊՈՎ. — Հրաման. օ՛, թողէ'ք այդ պաշտօնական խօսքերը: Դուք, հրեշտակս, ստեղծւած չէք հրամաններ կատարելու, այլ սիրելու եւ սիրելու միայն: Ահա՝ ձեզ սիրու եւ զանձերիս բանալին (մօտենում է): Ո՛չ, ո՛քան անուշ էք դուք: Երջանկացրէք ինձ ձեր մի գոյց համբոցներով (ձեռքը ձբգում է ու քառում դեպի իրեն գրկին ծայր աստիճան վավաշանիքով):

ՆԱՏԱՇԱ. — (Բարկացած) թողէ'ք ասում եմ: Ամօթ է ձեզ, չէ՞ որ այդ դիրքը վայել չէ ձեր տարելն անդամ: թողէ'ք ասում եմ:

ՕՍԻՊՈՎ. — (Մի փուր քըրադրամ աշխատելով դնել երա ափի մէջ) Ահա ձեզ հինդ հարիւր ըուրած, ձեր մի համբոցի փոխարէն: Նատաշա, Նատաշա, ինդըում եմ մի արհամարէք թշւառիս: ա՛ռ, ա՛ռ, դա նւէր է:

ՆԱՏԱՇԱ. — (Դրամները դէն ռպրտելով) Դուք ի զուր էք աշխատում ձեր հարստութիւնով ինձ իշցանկութեան հակառակ գործել տալ: Ի սէր Աստծոյ ինձ հանդիսատ թողէ'ք: (Կամենում է զնալ, Օսիպով ոյժով պահում է: Այդ միջոցին ներս է մտնում տիկին Մանիան եւ քարացած մնում: Նատաշան տեսնում է երան իսկ Օսիպով՝ ոչ):

ՕՍԻՊՈՎ. — Նատաշա, հոգեակս, մի համբոչը...

ՆԱՏԱՇԱ. — (Արհամարանիքով) թողէ'ք, ձեր տիկինը ասում է՝ այդպիսի բաների համար ձեր տունը լարմարութիւն չունի:

ՕՍԻՊՈՎ. — Դուք էք իմ տիկինը...

ՆԱՏԱՇԱ. — Սխալում էք: (Ցոյց տպանվ) Ահա՝ ձեր տիկինը: (Օսիպով տեսնում է իր տիկինը ու ապուս կարում: Պառազա):

ՄԱՆԻԱ. — Ամօթ քո արժանապատռութեան, ամօթ քո դիրքին, ամօթ քո տարիքին: Թոռէւհ, կիզիր, լիզիր ուները, լիզիր:

ՆԱՏԱՇԱ. — (Կես ծիծաղ եւ արհամարհանիք) Արժանապատռութիւն... (Անի քայլով զնում է) Գէտք է հեռանալ այս հոտած ճահճից, ուր ապականութեան մանրէներն են բեղմնաւորւում միայն, Սոդոմ... Սոդոմ... Սոդոմ... (դուրս է զնում):

Ա Ա Բ Ա Գ Ա Յ Յ



ԱՐԱՐԻԱԾ Բ.

Գործողութիւնը կատարում է նոյն ժաղացում. մէկ հասարակ սենեակի մէջ, որը ունի միայն մէկ դուռ եւ դրան կողմէրում մէկ մէկ լուսամռւտ: Սենեակում դրւած է մէկ հասարակ սեղան առանց ափողօքի, մէկ ժանի հասարակ աքոռներ: Մէկ պատի տակ՝ մէկ մահնակալ վրան աթևանոն ու անկարգ ձգւած մէկ ժանի մարդկանց պառկելու անկողիններ: Պատերից կախւած են զէնքեր: Սենեակի զանազան կողմէրում դրւած են ոռւմքեր: Սեղանի վրայ մէկ հասարակ լամպա, բանաֆ, զրիչ, բուղը, ծրար, զանազան կնիքներ եւ կնիքի բարձիկներ ու մի ժանի անպատրաստ ոռւմք:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԱՏԵՇՈՂԿԱ. — (Քամբւած ատրճանակներ է մաքրում. նստած գետնի վրայ, ատրճանակի մասեր եւ մէկ ամանի մէջ նաւք առջեւը դրած) **Փայլի՛ր**, **փալի՛ր**, ատրճանակ ընկեր, տեսնենք էլի ում հոգոյն ես կարգալու: Ինձ թւում է այս անզուս առաստ հունձ ենք ունենալու: Հաւատացնում եմ՝ Նառւմ, կարծես հէց դրպանիս մէջն է:

